

ւին յստիարհեա ել կ'առնես, դու գիտես, ի Հապաճն կ'երթամ, ի Ֆուանգի կ'երթամ, ի Մոոկոլ կ'երթամ. Աջամխասան կամ յեջմիամիկն չեմ երթար, քե ի սեղս քս պսմանել չալն եւս գիտնամ, դու ողջ կեցիր եւ որպէս կամիս այնպէս արա...» (Սիոն, 1940, էջ 282-284):

Արդարեւ, Յովհաննէս Թիւթիւնճիի ճամբորդութեան պատմութիւնը կարգալով՝ մարդ պահ մը կը մղուի հաւատալու, թէ այս ուղեգնացութեան շարժառիթը սոսկ հետաքրքրութիւնն է, վասնզի կուտայ կարգ մը տեղեկութիւններ երկիրին բնական նկարագիրին և բնակչութեան, ինչպէս երկիրին կառավարութեան մասին, որոնք ապացոյց են իր հետաքրքրութեան: Այս հետաքրքրութիւնը զինքը դարձուցած է աշխարհագրական մեծ գիւտի մը հեղինակը, վասնզի ինք առաջին անձն է, որ յաջողած է առաջին անգամ ճշգրէլ Նեղոս գետին ծնունդ առած վայրերը, զորս կը ներկայացնէ իր ճամբորդութեան նկարագրութեան մէջ, առանց մեծ նշանակութիւն մը տալու անոր կամ առանց գիտնալու անոր կարեւորութիւնը: Հետագային Եւրոպացի մը պիտի երեւան հանէր այդ գիւտը:

Արդարեւ Հապէշիստան, մինչև ԺԵ. դար, բոլորովին անծանօթ և առասպելական երկիր մըն էր: ԺԵ. դարէն յետոյ, երբ եւրոպական երկիրներու և մասնաւորապէս Հռոմի և Եթովպիոյ միջև յարաբերութիւններ հաստատուեցան, այս երկիրին մասին քիչ շատ տեղեկութիւններ հաւաքուեցան:

Մէկ դար յետոյ, Փորթուգալ սկսաւ դեսպաններ և միսիոնարներ ղրկել Հապէշիստան. ԺԷ. դարուն էր որ Հ. Fernandez թափանցեց Choah հարաւը և Հ. Paez և Հ. Lobo գտան կապոյտ Նեղոսի ալերը, որոնց այցելեց նաև Սկոտլանդացի Bruce, իր՝ դէ-